

# ՄՈՐԿԻ ՍՈՒՐԲԸ

## XI

Օրեր էին անցնում օրերի վրայ. աշխատանքի ժամանակ էր. հարեաններն շտապ-շտապ հաւաքում էին իրանց գաշտային բարեքը։ Նունուֆարը տեսնում էր այդ բոլորը ցաւով, տեսնում էր, թէ ինչպէս իր գործը մնում է, աշխատող ձեռներ չը կան, իսկ Ասօն էլ տուն չի գալիս, ասես իսկապէս մոռացած՝ թէ տուն ու օջաղ, մայր ու քոյր ունիւ Նունուֆարն իր փոքրիկ Շուշիկի հետ անում էր, ինչ կարող էր, ամբողջ ցերեկը չարչարւում էր գաշտերում, իսկ երեկոները տիտր ու ջարդուած սրածով յետ էր գալիս տուն, նստում բակի գըրան առաջ՝ աչքերը յառած մթութեան մէջ դէպի հեռուն, նայում էր և սպասում, թէ երբ կը յայտնուի Ասօն։ Բայց որդին չը կար ու չը կար, և մայրը լալիս էր խաւարի մէջ, լալիս էր իր իսեղծութիւնն ու անտէրութիւնը, իր օջաղի որբութիւնը։ Եւ չորս կողմում՝ ասում էին՝ պատրաստում է մի սոսկալի բան, մի անուրոշ, մութ սարսափի, որ կարծես բարձրացել էր հեռու հեռու, և շարժում, գալիս էր քայլ առ քայլ, և ասում էին որ այդ սարսափը կը հասնի Ա... գիւղին աշնանը։ Ապրօն զուր չէր ճշում՝ «զուլում, զուլում»...

\* ) Տես Մովճ Խ 3.

Եւ մարդիկ շտապում էին...

Եւ Նունուֆարը մենակ էր ու անտէր. ինչ պիտի անէր, երբ համէր սարսափը. ում դիմէր, ով նրան կը պաշտպանէր:

Սե էր պատել նաև Գիւլնազենց տունը. լճի վրայ նաւակի մէջ իր աղջկայ ծայրայեղ վիշտը տեսնելուց յետոյ նաւօն էլ աւելի մռայլուել էր. նրա յօնքերի արանքում մի զոյտ խորը կնծիոներ էին կազմուել, որ էլ չէին հեռանում ճակատից, ինչպէս աշնանային ամպերը երկրնքից. Ըստ երեսյթին նա իր գործը շարունակում էր առաջուայ պէս, ամեն առաւօտ վեր էր կենում, ուռկանը շալակում; շարժում էր դէպի լիճը և երեկոյեան վերադառնում, բայց օրաւուր աւելի և աւելի լուսկեաց էր դառնում, և իր աշխատանքն էլ առաջուայ պէս արդիւնաւէտ չէր. Մի զարհուրելի քէն էր բուն դրել նրա սրտում դէպի շատ բան աշխարհում, դէպի ամեն մի երջանկութիւն և մանաւանդ՝ դէպի այն ջրաղացը, ուր ապրում էին Գոպէն ու Ասօն, նրա համար երկու հաւասարապէս ատելի արարածներ: Նրա ատելութիւնը դէպի Գոպէն հին էր, շատ հին. մի գաղտնիք կար երկու ծերունիների մէջ, որ ծածուկ էր ամբողջ աշխարհից: Նաւօն էլ շատ տարիներ առաջ սիրում էր այն աղջկան, որի մահուան պատճառ եղաւ Գոպէի հայրը, և նրանք ախոյեաններ էին: Վրիժառու և կատաղի նաւօն իր հակառակորդին վիրաւորելու համար ամուսնացաւ Գոպէի երկրորդ նշանածի, Գիւլնազի հետ: Այսպիսով նրանք երկու անդամ պատահեցին իրար կեանքի ճանապարհին և երկու անդամին էլ բաժանուեցին անհաշտ թշնամիներ:

Ամուսնանալուց յետոյ նաւօն նկատեց Գիւլնազի կողմից խիստ սառն վերաբերմունք դէպի իրան, նա այդ վերագրեց իր կնոջ տակաւին վառ սիրուն դէպի Գոպէն, և իր ատելութիւնը գաղաժնակէտին հասաւ թէ դէպի մէկը և թէ դէպի միւսը: Իր կատաղութեան մէջ նա տարիներ շարունակ ծեծում, տան-

ջում էր Գիւնազին, և միայն Շողերի ծնունդը մեղմ նրան և երկու ամուսինների մէջ կապ հաստատեց։ Նաև այնուհետեւ ամբողջ աշխարհը կետրոնացրեց միայն Շողերի մէջ, աշխատում, տքնում, ապրում էր միայն նրա համար։ Լուռ էր, սակաւախօս, արտաքուստ սառն ու մուայլ, իր ծնողական սէրը չէր արտայայտում երբէք, բայց նա իրօք պաշտում էր Շողերին։ Եւ այժմ տեսնելով՝ թէ ինչպէս օրաւուր մաշտում է իր աղջիկը, նա կիսում էր յօնքերը, և Գոպէի ջրազացի գոնից անցընելիս՝ սզմում էր բռունքըները և մրթմրթում էր անէծքի խօսքեր և՝ Գոպէին, և՝ Ասօին։ Հին ատելութիւնը քնած դազանի պէս զարթնում և կամաց-կամաց գլուխ էր բարձրացնում, նաև սպառնում էր այն մենաւոր ջրաղացին և նրա բնակիչներին։

Շողերը հիւծւում էր օրաւուր, նրա լիքը, կարմիր պյտերը դատարկում էին ու գունատում, լուսու արձանացած նա ժամերով մնում էր միւնոյն տեղում նստած, հայեացքը մի կէտի սեեռած։ Ասօի և Շողերի շուրջը պտտում էին լուրեր, որոնք ալիքների պէս բարձրանում էին և մօտ էին խեզզելու վշտահար, յուսահատ աղջկան։ Հազար ու մի բաներ էին փափրտում մէկը մըւսից վատ։ Հաստատն այն է, հաւատացնում էին ամենքը, որ Ասօն իսպառ թողել է Շողերին, որովհետեւ նա իր մեծ եղբօր նշանածին չի ուղում առնել, բայց հօրը խօսք է տուել և դարդից խենթացել է։ Ասում էին նոյնպէս, որ Շիրինենց Պետօն նրան իսպառ խենթ է տեսել Գոպէի ջրազացում։

Ինչ էլ լինէր, Գիւնազն ու Նունուֆարը մայրեր էին և անդադար ճար ու հնար էին փնդրում իրանց զաւակների բախտաւորութիւնը յետ բերելու։ Թէև որը բերը չօգնեցին, բայց և այնպէս նրանցից ով մի նոր սըրի անուն էր յիշում, վազէվազ գնում էր միւսին յայտնելու, և յաջորդ օրը նրանք ճանապարհ էին ընկնում դէպի նոր ուխտածքով։ Եւ այսպէս օրեր ու շաբաթները ուղիւնեցին նոր զոհերով, հին աղօթքներով ու ինդրուածքով։

Եւ մրրիկը պատրաստում էր կամաց կամաց, հեռաւոր սարսափը բարձրանում, գալիս էր, ինչպէս ու աղուաների երամը, որ ուշ աշնանը դաշտից դաշտ է տեղափոխում վհատեցուցիչ ամայութեան մէջ։ Ասում էին, որ Մըրկի սուրբը կրկին յայտնուելու է իր խաչքարի վրայ, որպէսզի սարսափը երկրի վրայից անցնի առանց աւերածի։ Ծանր ժամանակներ էին, ծանր օրեր։  
Եւ Ապրօն շարունակում էր գիշերները ոռնալ։  
«Զուլում, զուլում...»

## XII

Այն երեկոյ նախիրն եկաւ ու փոշու ամպերով գիւղը պատեց. հոտերը բառաչելով ցած իջան լեռներից, հընձուորները գերանդիներն ուսերին տուն յետ գարձան։ Նունուֆարն էլ Շողերի ձեռքից բռնած՝ մի խուրձ խոտ շալակին՝ դաշտից տուն եկաւ։ Մայր ու աղջիկ անասունները տեղաւորելուց յետոյ իրանց սովորութեան համեմատ նստեցին և սպասում էին։ Թէ վաղուց էին դադարել յուսալուց, բայց էլի սպասում էին, ով գիտէ, յանկարծ Ասօն խելքի գայ, տուն վերադառնայ, յանկարծ չարքից աղատուի։ Դուռը ճռռալով բացուեց, մայր ու աղջիկ շփոթուած նայեցին, ներս մտնողը Գիւնազն էր։

—Ասօն էլի չը կայ։

—Չը կայ, քոռանամ ես, պատասխանեց Նունուփարը։

—Թո՞ղ որ ես քոռանամ, Նունուփար-խաթուն, մինուճար աղջիկս երկու անդամ է ու կապում, իմ որ մեղքի համար։ Չի ապրի, քուրիկի, չի ապրի, ահաւոր դատաստանին պարտական կը մնայ Ասօն։ Էդ ինչ արեց, ինչ հողը տուեց մեր գլխին։ Ա՛խ, ջրատանը Շողեր, չի ապրի ջրատարը. անցեալ օրը տեսել է...»

—Ո՞ւմը։

—Ասօխն, ումը. տեսել է լծի ափին. ես քեզ չէի

ասում, դէ ինչ ասէի, գուրդ չէր գայ. հիմայ տեսնում եմ, որ պահելով բան չի գուրս գայ, լաւն էն է՝ ասեմ. տեսել է Ասօին ջրի ափին, ինչեր են խօսել, ես ինչ ի՞մանամ, միայն էն օրուանից ոչ գիշերը քուն ունի խեղճ երեխաս, ոչ ցերեկը հանգիստ, լալիս է, լալիս է, արուն-արցունք է քամում, մահից է խօսում անդաշ-դար: Կ'երթամ, ասում է, ինձ սարից ցած կը գլորեմ, որ աղատուեմ, իմ ոտքն, ասում է, բէխէր է, ում հետ կապուեմ, մի չար բան կը պատահի, էն մէկ ախողերն էն-պէս էլաւ, էս մէկն էլ էսպէս, հալբաթ մի բան կայ, հալբաթ ճակատիս է գրուած: Լաւն էն է, ասում է, մի տեղ թաղեմ սեաւոր գլուխս ու պրծնեմ: Ինչեր է աշ-սում, Նունուֆար-խաթուն, ախ, որ լսես, քար ընի, չի դիմանայ, սիրտս քամում, աղիքներս գալարում են ջիգեարիս մռմուռից, մեռնում եմ, էլ քուն չ'ունիմ, ու երազներ, չար ու բարի երազներ գիշերը հանգիստ չեն տալիս ինձ: Իմանաս հւմն եմ տեսել էս գիշեր:

—Ո՞ւմը, Գիւնազ:

—Էն սարի սրբին, Մրրկի սրբին, մեռնիմ իր զօրութեանը:

—Մեռնիմ իր զօրութեանը:

—Երազիս եկաւ ծերունի ծղնաւորը, մեծ միրու-քով, փառահեղ գէմքով, լալիս էր, լալիս էր տնաւեր սուրբը, Նունուֆար-խաթուն, ասում էր, ամենքն ինձ մռուացել են, իմ արիւնոտ խաչքարին ոչ ոք ուխտ չի դալիս, բայց իմ զօրութիւնն, ասում էր, աշխարհով է: Դուք էլ էք մռուացել, մեծ ու փոքր սուրբ ու խաչքար չը մնաց, գնացիք տեսաք, մատաղ տարաք, մէկ ես եմ մռուացուել, լաւ, թող ուրիշները ձեր ուխտը կատարեն:

—Հա, իրաւ է, նրան մռուացել ենք:

—Զայրացած էր, Նունուֆար, ինչպէս էր զայրա-ցած, աչքերը չոեց վրաս, գլուխն օրօրեց, երկար մի-րուքը թափ տուեց, փախիցս գողացի, զարզանդը ըռնեց ինձ, ու վեր թռայ, երազ էր: Քրտնքի մէջ կորած էի:

Գնանք, Նունուֆարը խաթուն, գնանք սարի խաչքարի ստքը:

—Նունուֆարը լուսմ էր լուս ու մուխոհ, նա կամ մի ծանր մտքով էր զբաղուած, կամ հաւատը խախտուել էր դէպի սրբերը:

—Նունուֆարը խաթուն, շարունակեց Գիւնազը, մենք ծնկաչոք սողալով, չանգուելով կը բարձրանանք մինչև խաչքարը, մինչև Մրրկի սուրբը. նա, որ երկինք ու գետին իրար խառնուած ժամանակ գիտէ փրկել աշխարհը, նա միայն կարող է ազատել Ասօին շարից, ցաւից:

—Հա, հա, շարից, ցաւից:

—Մրրկի սուրբը, Մրրկի սուրբո, Նունուֆարը խաթուն, շատ է հզօր, շատ է գթած, նրա դուռը ոչ ոք չի գնում, նրան մատաղ ոչ ոք չի անում, բայց էլի Մրրկի, փօթորկի ժամանակ՝ ասում են՝ նա է հասնում ամենիս, մեռնիմ նրա սուրբ զօրութեանը:

—Հա, հզօր է, մեռնիմ նրա սուրբ զօրութեանը, կրկնեց Նունուֆարը մեքենայաբար:

—Մրրկի սուրբը, Մրրկի սուրբը, Նունուֆարը խաթուն, շատ է հզօր, նա հազար ցաւի ճար ու գեղ ունի, նա հազար դարդի դարմանը գիտէ, նա ողջ երկինքը կապւկապել գիտէ, նա սեւսկ ամպերն է հալածում վերից, խիստ քամիների ակերը փակում, նա հազար դարդի ճարդարման ունի, հազար սրտերի սփոփանք ունի, ինը ըլն էր ասում, ողորմած սուրբը, մեռնիմ նրա սուրբ զօրութեանը:

Պառաւները կրկին խաչակնքեցին:

—Գնանք, գնանք նրա ստքը:

Նունուֆարը լուս էր և ծունկը գրկած՝ մեղմիւօրորւում էր:

—Ի՞նչո՞ւ չես խօսում, քուրիկ:

—Է՛տ, ինչ ասեմ, կրակն էնքան մեծ է, որ էլ ջուր չենք հասցնի. —Նունուֆարը հեկեկաց և աչքերը սըրբեց. —սրբերն էլ ինչ անեն:

Գիւլնազը շփոթուած նայում էր, նունուֆարը նոր բան գիտէր:

—Նունուֆար՝ խաթուն, էս օրուայ լացդ...

—Թո՞ղ գուշմանս էս արցունքը չը թափի:

—Ի՞նչ ասաց տիրացուն:

—Տիրացուն... ասաց կմկմալով նունուֆարը. —տիրացուն տանը չէր, չը տեսայ, էհ, ի՞նչ տեսնեմ:

—Ի՞նչպէս թէ ի՞նչ տեսնեմ, սուրբը՝ չէ, տիրացուն՝ չէ, բա էլ ի՞նչը, ով, ուր գնանք, ում դիմենք:

—Ոչ ոքի, ամեն բան պլծաւ, էլ ճար, փրկութիւնը կայ:

—Ի՞նչ ես ասում, քուրիկ, բա տիրացուի դրբերը, աղօթքը, փշատի ծառը...

—Բոլորը զուր է, քանի որ նրանց մօտիկ, շատ մօտիկ մի պիղծ, մի անսատուած գործ է կատարուել:

—Ի՞նչ ես ասում, այ քուրիկ, երկինքը, հոգիւթուացել ես:

—Ոչ երկինքն եմ մոռացել և ոչ հոգիս, բայց տիրացուի գրքերին մօտիկ մի էնպէս բան է կատարուել, որ ասել վախենում եմ, բայց չ'ասել, ծածկել էլ չեմ կարող, Գիւլնազ. էս գաղանիքը ցեց դառած՝ կը ծում է իմ ներսը, սարսափելի բան է:

—Ի՞նչ է, նունուֆար, անողնը, հոգիս հանեցիր, սիրոս կտրեցիր, դէ, զարկ սպանիր մի հետ, էլ ի՞նչ ես մանր~մանր մորթուում:

—Ախր ասել չի լինում, ինձ թաղես, շարունակեց նունուֆարը փափսալով. —պատերից էլ եմ ամաչում:

—Խեղդւում եմ, անողնը...

Երկու կանայք երես երեսի հանդէպ իրար աչքերի մէջ էին նայում ու հեռւմ էին յուզմունքով, հեռւմ էին և սպասում:

—Նունուֆար...

—Տունդ քանդուի, Գիւլնազ, Ասօն Շողերին թող նում է, նրա սիրաը կպել է Շիրինենց թաղա հարսին՝

Սառային, թառլան Սառային, հէնց տիրացուի գրքերի  
մօտ:

—Վայ, ճշաց Գիւլնազը և երեսը ձեռների մէջ ա-

ռաւ: Նա երկար մնաց այդպէս և մեղմիւ հեծկլառմ էր:

—Դոնէ չիմանան, խալիը չիմանայ, Տէր Աստուած,

մըմնջում էր նունուֆարն ինքն իրան:

Գիւլնազը գլուխը բարձրացրեց, դադարեց լալուց,  
ոտքի կանգնեց, ձգուեց իր բոլոր հասակով ու գոշեց  
սպառնալի.

—«Խալիը չիմանայ... չէ, ես պիտի ճշամ աշխար-  
հովը մէկ, քանի ձայն ունիմ, քանի ոյժ ունիմ, քանի  
շունչ ունիմ, այ, կը բարձրանամ էն սարի գլուխը և կը  
կանչեմ» «Հարեաններ, ժողովներդ, գեղացիք, Մուրադի  
Ասօն անամօթ, անպատիւ, անողորմ մարդ է, նա սի-  
րում է ուրիշի կնկան, նա թողնում է իր նշանածը»:  
Կասեմ, որ նրա ոտքը պիղծ է, նրա կոխած տեղը ա-  
նիծուած, թոն մարդիկ երես գարճնեն, երբ նա անցը-  
նում է, կամ մատով ցոյց տան հեռուից, ինչպէս մի  
դե, մի չար ողիւ: Կասեմ, կոռնամ, կը ճշամգիւղովը  
մէկ, սարերով, ձորերով մէկ, թոն ամենքն իմանան, ա-  
մենքը...»

—Մուս, սուս, Գիւլնազ, Աստծուց վախեցիր:

—Ել ոչ վախ ունիմ, ոչ ամօթ, նունուֆար, քո տը-  
ղան երկուսն էլ խլեց, իմ որ մեղմի համար, կը հարցը-  
նեմ աշխարհին, թոն դատ ու դատաստան անեն... Բայց  
Շողերս, օօ, հոգն իմ գլխին, ինչեր եմ ասում, թէ յան-  
կարծ նա էլ իմանայ. չէ, չէ, պապանձուիր, լեզու, չորա-  
ցէք, չթունքներ, նունուֆար, ես կը լւեմ, թոն ոչ ոք  
չիմանայ, ոչ ոք, միայն Շողերից էլ ծածուկ մնայ, թէ  
չէ... ախ, ինչ կ'անի, եթէ յանկարծ իմանայ, Աստուած,  
Դու ողորմաս, ես մեղաւոր ու անարժան եմ, Դու էն  
խեղճ երեխայիս խնայես: Լուռ, լուռ, նունուֆար, էն-  
պէս չէ:

—Հա, հա, Գիւլնազ. լուռ, մինչեւ տեսնենք՝ Աս-  
տուած ինչ դուռ է բաց անում:

Երկու կամսայք այնուհետև դեռ երկար վշտումէին ու արցունք թափում, դեռ երկար խնդրում էին իրար փոխադարձաբար գաղտնի պահել բոլոր խօսածները և չէին նկատում Շուշիկի բացակայութիւնը, որ վաղուց դուրս էր եկել դնացել։ Գիւլնազը չորս կողմը նայեց, դունատուեց ու ճշաց.

—Շուշիկը, ուր է Շուշիկը։

—Շուշիկ, Շուշիկ, կամչեց մայրը։

Փոքրիկ աղջիկը չը կար. Գիւլնազը սաստիկ շիռ թուեց՝ հաստատ համոզուած, որ Շուշիկը իրանց տուն է դնացել։

Չի յայտնիլ արգեօք լսածները...

Գիւլնազն շտապով դուրս եկաւ, վազեց տուն, իսկ Նունուֆարը մնաց իր տեղում վշտից քարացած։

### XIII

Իրար յաջորդող հոգեկան ծանր ցնցումները վերջ ի վերջոյ խորտակեցին Շողերին։ Կայտառ ու կենդանի, ապրելու, վայելելու եռանդով լի ջահիլ արարածը դէպի կեանքը նետուեց, որպէս գարնանը մեղուն դէպի ըուրալից ծաղիկը, և մեղրահիւթի փոխարէն թոյն ծծեց ու գետին ընկաւ փշուած։ Նա էլ տնից դուրս չէր գալիս ինչպէս վշտահար թունակ, որը ոյժ չունի հեռանալու իր աւերուած բնից, մի նոր անկիւն, մի նոր բազդ որոնելու ժամերով նստած միեննոյն տեղում՝ նա մնում էր անշարժ, չէր լալիս, չէր գանդատում, այլ նայում էր մի կէտի անընդհատ. իսկ երբ վեր էր կենում, քայլում, շարունակ նայում էր ոտների տակ, կարծես մի շատ թանգագին կորուստ էր փնդրում։

Լացողը մայրն էր, սգացող, արցունք թափողը նա էր ըոլորի համար։ Զաւակի ցաւը շատ էր ծանր, որպէսզի գերազդ մայրը հանգիստ ունենար, օր ու գիշեր հոգուը Շողերն էր։ Նաւօն ամեն առաւօտ լիճը դնալիս՝ միայն գաղտագողի աջք էր գցում աղջկաց վրայ, գլուխն

օրօրում, շրթունքները շարժւում էին, բայց ոչ ոք չը դիտէր, թէ նա ինչ է մտածում, ինչ է ասում: Մայրն էր, որ ամեն առաւօտ դուրս էր գնում Շողերի դարդի ճարը փնդրելու արբերի դրանը:

Եւ ամեն օր, երբ հայրը ուռկանը շալակած դէպի լիճն էր գնում, իսկ մայրը դէպի սրբերը, Շողերը մը նում էր մենակ իր վշտի հետ, տանը լոռութեան ու ամայութեան մէջ նրա սև մտքերը ընդունում էին այլանդակ ճիւաղների կերպարանք և տանջում, տանջում էին նրա: Բոլոր շշուկները, դիւզում պտտուող բոլոր չար զրոյցները Ասօի և իր մասին կամաց-կամաց ասես քառմիների թեերովդալիս, ներս էին թափանցում նաւօենց տուն և թանձր, սև ամպերի պէս բարդ-բարդ նստում էին Շողերի սրտին, և ամեն օր նրա կուրծքը ճնշող ըեռն աւելի էր ծանրանում, և ամեն օր սիրտն աւելի էր ուռչում, բարձրանում, աղջիկը խեղդուում էր, տառապում: Նրա ցաւոտ հոգին, նրա ամբողջ գոյութիւնն այժմ նման էր մի խխտ ձգուած լարի, որ մօտ է կը տրուելուն. աչքերը չոր էին, բայց սիրաը լալիս էր, մղկը տում:

Նախ ասացին, որ Շողեւը շատ ուրախ եղաւ իր առաջին նշանածի մահուան համար. յետոյ՝ թէ Ասօն ընկնաւոր է, Շողերն է վախենում, փախչում նրանից, օրեր յետոյ լսուեց մի տեղից ամենածանը շշուկը. — ասում էին, թէ Ասօն ոչ խենթ է, ոչ ընկնաւոր, այլ հըրաժարուում է Շողերից, որովհետեւ հաստատ չը դիտէ, թէ նա իր եղբօր նշանածն է եղել, թէ կինը... ահա այս սպանիչ շշուկն էր քարացրել Շողերին միենոյն տեղում: Նրան թւում էր, թէ ամբողջ աշխարհը խօսք մէկ արած՝ իր դէմ է, թէ երբ ստքը դուրս գնի տանից, հազար բերան կը պոռան իր յետեկից, և նա խեղդեում էր տան մէջ մենակ, յուսահատ, ոչնչացած: Իր վշտի բոլոր խորութիւնը, ցաւի մեծութիւնը դրել էր այն քարացած հայեացքի մէջ, որ նա սեեռում էր մի կէտի: Իր ամբողջ սև գոյութիւնն էր խտացրել նա ապակու պէս

պաղ աչքերում, որոնք նայում էին անընդհատ, ասես  
այս աշխարհից դուրս, անհունութեան մէջ, մի այլ աշ-  
խարհից ճարհնար էին փնդրում։ Կուսական աչքերի  
կոպերը յետ էին քաշուել ու սառած մնացել՝ ասես վա-  
խենալով ծածկել բերերի մէջ փայլող վիշտը, ինչպէս  
կապուտակլնի երկու քնքոյ ալեակներ, որոնք բարձրացել  
էին ու քարացել միւնոյն տեղում՝ համարձակուելով յետ  
դալ ու խորշումել ջրերի հարթհաւասար երեսը, որ  
թագյնում էր իր տակ այնքան դաղտնիքներ, այնքան  
խութ ու խոռոչներ։

Միայնութեան ու վշտի այս սարսափելի ժամերում  
Շողերի միակ սփոփանքը Շուշիկն էր, Ասօի փոքրիկ  
քոյրը, որ այնպէս նման էր եղբօրը, որ միւնոյն ձևով  
աչքերը թարթել, վիզը կորացնել և ժպտալ գիտէր։ Նա  
սիրում էր Շուշիկին այն անզօր ու խղճուկ սիրով, որ  
մեծ կորստից յետոյ բաւականանում է մի ժպտով,  
աւերակից յետոյ՝ մի տաք անկիւնով, փոթորկուած ծովի  
վրայ օրօրուում է մի փոքրիկ նաւակում։ Շուշիկը նրա  
սրտի ամայացած անպատում մի յետին ծաղիկ էր,  
որի վրայ գեռ չէր փշել մահացու քամիների կիզիչ շուն-  
չը։ Եւ երբ փոքրիկ աղջիկը դուռը բանալով՝ վազէվազ  
ներս էր նետուում, Շողերի թախծալից դէմքի վրայ մի  
տխուը ժպիտ էր անցնում, ինչպէս թխզու երկնքի հա-  
մատարած մռայլի վրայ արեի մի վաղանցուկ փայլ։  
Եւ ամեն անդամ Շողերին թւում էր, թէ Շուշիկը եղ-  
բօր մի մասն է բերում, մի յետին մնացորդը այնքան  
գեղեցիկ, վարդագոյն յօյսերի։ Եւ Շուշիկը նրա մօտ  
գալիս էր ուրախութեամբ, միշտ ժպտագէմ, իսկ Շողե-  
րը անձկանօք էր սպասում նրա գալստեանը։ Նրանց  
մէրը փոխագարձ էր։

Այն երեկոյ Շողերը գարձեալ մենակ էր մօր հե-  
ռանալուց յետոյ, երկու ձեռքով ծնկները գրկած՝ նայում  
էր անսորոշ հայեացքով, երբ փոքրիկ աղջիկը դուռը բա-  
ցեց և ներս եկաւ։ Այս անդամ Շուշիկը ամենօրեայ աշ-  
խոյմն ու խնդութիւնը չունէր դէմքին։ Շողերը գլուխը

բարձրացրեց, ժպտաց ըստ սովորութեան ու գրկեց փոքրիկին. ապա երկու ձեռքով նրա գլուխը բռնեց, իրանից մի փոքր հեռացրեց և մի քանի վայրկեան նաշյում էր այն մանկական վառ աչքերին, այն սիրում դէմքին, երկար խօսպներին, նայում էր և չէր կշանում, այնքան շատ բան ունէր այդ աղջիկն իր եղբօրից:

— Շուշիկ ջան:

Աղջիկը ախուր էր և իր մեծ աչքերով նայում էր Շողերին:

— Շուշիկ:

Փոքրիկ աղջիկն այս անգամ հեկեկաց ու գլուխը թագցրեց Շողերի կրծքում:

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ ես լալիս, Շուշիկ ջան:

— Քո մայրիկն էլ էր լալիս, իմ մայրիկն էլ էր լալիս, շատ լաց եղան, ես էլ վերկացայ, եկայ քեզ մօտ Մայրիկս բաներ ասաց, յետոյ լաց եղան:

— Ի՞նչ ասաց, Շուշիկ ջան:

— Ասաց... ասաց, որ Ասօն էլ քեզ չի ուզում... ասաց՝ Սառային է ուզում... էն Շիրինենց Սառային, գիտե՞ս... յետոյ քո մայրիկը երեսը ծածկեց, հեկեկաց, յետոյ երկուով էլ լաց եղան, ես էլ վախեցայ, եկայ քեզ մօտ... դու լաց չես լինի, քուրիկ, համ. որ գու էլ լաց լինես... ես վախենում եմ, որ լալիս են...

Երեխան դեռ էլի երկար խօսում էր, պատմում էր, թէ ինչեր արին, ասացին իրանց մայրերը, բայց Շողերը գաղարել էր լսելուց, հէնց առաջին խօսքերից նագունատուեց, կծկուեց, սիրտը բռնեց թափով և գլուխը ծնկների մէջ առաւ:

Շողերին թւաց, որ երկինքը ճայթեց իր գլխին, ու այդ փոքրիկ ձայնը, որ հնչում էր նրա ականջի տակ, կարծես նրա մահուան դատավճիռն էր կարդում: Սոսկումի, ցաւի խօսքեր էին արտասանում այն փոքրիկ, անմեղ շրթունքները, և այն քննոյց ձայնը շարունակում էր հնչուել ահաւոր ու սպառնալիք: Շողերի մօտ էլ Շուշիկը չէր, այլ մի սարսափելի բան, որ գալարւում, բարձը-

րանում էր նրան խեղիւուշ նա շարտնակում էր մնալ գլուխը քաշ, կծկուած, ականջներում հազար ու մի ձայներ, գանդի մէջ անհասկանալի աղմուկ, նման այն աղմուկին, որ մարդ զգում է գլխին հասած մի ծանր հարուածից յետոյ. Ապա կամաց-կամաց ժամանակն ու տարածութիւնը խոյս տուին նրանից, Շողերն էլ չը գիտէր, ուր է ինքը, ինչ է ինքը. յետոյ նրան թւաց, թէ ընկած է մի մութ, խուլ անտառում, որ վերջ ու սահման, ճար ու ճանապարհ չ'ունի, և ճիւաղներ, հրէշներ, գաղաններ թփերի տակից, ճիւզերի արանքից իր վրայ են ուղղել իրանց գիշատիչ աշքերը, մեկնում են իրանց սոսկալի ճիրանները, բռնում են, քաշում են մաղերից, և նա փախչում է, փախչում է բոլոր ուժով, բայց լսում է իր յետեից բազմաթիւ ոտնաձայներ, ողջ աշխարհն է նրա յետեից ընկած հալածում, իրանց բոլոր գիւղը, ինչեր են ասում, ճշում են, ոռնում են, և այդ բոլոր ձայներից իր մազերն են գիշանում, ոտներն են գողում, բայց նա փախչում է անընդհատ, ընդհարւումէ ծառերին, ընկնում է, վեր է կենում, դարձեալ ընկնում, և ճշում է բարձրաձայն...

—Քուրի կ, քուրի կ...

Շողերն ուշըի եկաւ, նայեց իր շուրջը և միայն այժմ տեսաւ Շուշիկին, որ լալիս էր ու նրան կանչում։ Գունատ ու գողդոջիւն Շողերը փոքրիկին իր գրկի մէջ առաւ, գլուխը սղմեց իր կրծքին և մօր պէս օրօրում ու խօսում էր նրան.

—Մի լար, Շուշիկ ջան, մի լար, չէ դու պղտիկ ես, շատ պղտիկ, դեռ ինչքան ժամանակ ունիս լալու։

—Ալսր դու ինձ վախեցրիր, էնպէս էիր ճշում, ես էլ նրա համար լաց եղայ։

—Այ, էլ չեմ վախեցնի, միայն դու լաց մի՛ լինիր, մատաղ, ինչու լանք, ես էլ դադարեմ լալուց, նոր ծով շինելու չենք, ծովը կայ, Աստուած է պատրաստել բոլոր լացողների համար։

—Լացողների համար է ծովը։



— Հա, հա, Շուշիկ ջան, լացողների համար:

— Ես էլ չեմ լայ, ծովից վախենում եմ:

— Դու մի վախեցիր, մատաղ, քեզ համար չէ, ինձ համար է, միայն ինձ համար, ծովով ելաւ, ելաւ բարձրացաւ, ծածկում է ինձ, Շուշիկ ջան, թռղ ծածկի, ծովի տակը լաւ է, խաղաղ, հանգիստ...

— Քուրիկ, ախր ես վախենում եմ, որ դու էդպէս ես խօսում:

— Մի վախեցիր, մատաղ, գեռ շուտ է քեզ համար, ինչքան ժամանակ ունիս, ինձ համար է միայն, ինձ համար քամի էլ կայ, դուման... փշեց քամին, դուման ելաւ, ասր ու ձոր միջնեց, թռչունի բոյնը քանդուեց...

— Գիտես, քուրիկ, Էն օրը մի թռչունի բոյն կար քարափի ճեղքում, մենք չը քանդեցինք, Ասօն ինձ միշտ ասում էր, որ չը քանդեմ:

— Լաւ արեցիք, Շուշիկ ջան, ինչու քանդէք, ուշ րիշները կը քանդեն. Ասօն էլ էր ասում, Ասօն... օ՛օ, ուղումած Ասօն:

— Ես Ասօխն շատ եմ սիրում:

— Լաւ ես անում, Շուշիկ ջան, սիրիք, սիրիք ախտորդ, միայն ախտօրդ, յետոյ երբ մեծանաս, այն ժամանակ էլ միայն ախտօրդ սիրիք ես ախտեր չունիմ, որ սիրեմ:

— Դու էլ ինձ պէս Ասօխն սիրիք:

— Ասօխն... Ասօխն, օ՛օ. Շուշիկ ջան, ես քեզ եմ սիրում, քեզ դ, էլ ո՞չ ոքի, և Շողերը կրկին ողմեց կրծքին փոքրիկի գլուխը ու հեկեկաց բարձրաձայն:

— Էլի լացեցի՞ր, ախր ես վախենում եմ. մեռեների վրայ են լաց լինում, ես մեռելից վախենում եմ, քուրիկ: Շուշիկն էլի սկսեց լալ:

— Մի լար, մատաղ, երբ մեռել լինի, այն ժամանակ կը լաս, հիմայ հօ չը կայ, տես, ես կենդանի եմ, քո արցունքը թէ ձեռքիս ընկնի, կ'այրի:

— Կ'այրի:

— Հա, կ'այրի, սիրտս էլ կ'այրի:

—Ել լաց չեմ լինի, ես կ'երթամ մայրիկիս մօտ, դու  
լաւ չես, լաց ես լինում: Եւ փոքրիկ աղջիկն ազատուեց  
նրա գրկից ու դուրս թռաւ, կրուա դրսի կիսախաւա-  
րի մէջ: Շողերը նայեց նրա յետեից, ապա զսպուած ար-  
ցունքները թափուեցին, և խաւար աան մէջ երկար լլա-  
ւում էին նրա հեկեկանքները: Յետոյ ինքն էլ դուրս  
եկաւ և շտապով կորաւ խաւարի մէջ: Մութ, գալա-  
րուն փողոցներով նա վազում էր դէպի գիւղից դուրս՝  
աշխատելով չը պատահել ոչ պի: Գուլալ մութ էր, շատ  
մութ, և լուսնի շուրջը կարմիր բակ կար կապուած:

Շողերի փոյթը չէր ոչ թանձր խաւարը, ոչ արիւ-  
նոտ լուսինը: Նա անընդհատ գնում էր խուլ, ամայի  
փողոցներով: Լճի կողմլց վչող հովը կամաց-կամաց զօ-  
րանում էր, երկինքը հետզհետէ ծածկում էր ամպե-  
րով, բնութեան մէջ մի անախորժ բան էր պատրաստ-  
ուում, բայց աղջիկն ասես այդ էլ չէր նկատում և քայ-  
լում էր անընդհատ: Մի անգամ միայն նա ցնցուեց ու  
մի վայրկեան կանդ առաւ, երբ հեռուում լսուեց Ապ-  
րօի սարսափելի ձայնը՝ «զուլում, զուլում... Շողերը  
լսել էր, որ Ապրօն խենթ է, բայց նա վախենում էր  
խենթերից, ուստի շտապեցրեց քայլերը. և հեռուում  
շարունակում էր լսուել նոյն ձայնը.

—«Զուլում, զուլում...»

Գիւղից դուրս, այնտեղ, ուր սկսում էր դէպի լի-  
ճը տանող ձորը, Շողերի առաջ ցցուեց մի մարդ, որ  
սպիտակ կտաւը դցել էր ուսին վերից վար. հէնց նա  
էր, որ «զուլում» էր կանչում, Ապրօն և գալիս էր գե-  
րեզմանատնից: Նա թեերը բացեց և փակեց Շողերի  
առաջ:

—Ո՞ւր ես գնում, աղջի, տես, լուսինը կարմիր է,  
ամպերը սե, դեերը շատ, գիշերը չար... թէ պատան  
ես ուզում, առ, ահա իմը... Սուրբ Կարապետն ասաց,  
թնդ ամենքը պատան առնեն, գերեզմանները գնացի մե-  
ռելահարցուկ, նրանք էլ նոյնն ասացին, ինչքան բաներ  
ասացին. ես էլ իմ փոսը փորեցի, խոր ու սե, սիպտակ

պատանը ուե փոսի մէջ շատ սիրուն է. դէ, դարձիր, զաւակս, տես լուսինը, տես գիշերը, տես ամսկերը, ոչ մէկը չի ուզում, որ դու գնաս, գնում ես, փախչում ես, պօօ...»

«Եղերը չեր լսում, նա թափով վազեց, անցաւ Ապրօի առաջից ու կորաւ խաւարի մէջ».

— «Փախան, խափանուեց... ոգի՞, թէ մարդ, մառել, թէ աղջիկ, խափանուեց».

Քամին սաստկանում էր, ամպերը կուտակում էին, խաւարը թանձրանում, և համատարած, խեղդող գիշերուայ մէջ լսում էր.

— «Զուլում, զուլում...».

Նաւօն գեռ չեր վերադարձել, Գիւլնազը մենակ ճշում էր փողոցներում, Եղերին էր փնդրում, այս ու այն դուռն էր թակում; վախլուկ ստուերների պէս մի երկու հոգի դուրս էին գալիս, մօտենում էին Գիւլնազին, փնդրում էին միասին այս ու այն կողմ, կանչում էին՝ Եղեր, Եղեր, պատասխան չը կար, և հեռում շարունակուում էր լսուել Ապրօի ձայնը.

— «Զուլում, զուլում...».

Փոթորկոտ, սոսկալի գիշեր էր...

## XIV

Այն երեկոյ ձկնորս նաւօն լճակի վրայ շատ ուշացաւ: Մի ամբողջ շաբաթ էր, ինչ նա անընդհատ աշխատում էր կողովների վրայ և այսօր հաւաքում էր իր վաստակի պտուղը. ձկները շատ առատ էին: Արեւ մայր մտաւ. թեթև հովը փարթիկ կնծիոններ շինեց լճի հայելանման մակերեսոյթի վրայ: Բաղմաթիւ մանրիկ ալիքներ իրար հրհրելով՝ եկան քսուեցին կղզու ափերին, լիզեցին խճելու ժայռերը, քրքչալով յետ ընկան, բայց գեռ նաւօի նաւակն այնտեղ էր: Սպիտակ, փոքրիկ առագաստը կամացուկ ուռչում էր, մեղմիւ օրօրւում և իր հետ տարուբերում էր նաւակը ջրերի վրայ:

Հաւալումները, ձկնկուները, վայրի բագերն ու այլ ջրային թռչունները այս երեկոյ շուտ հեռացան, շամբուտներում էլ վաղ լուցին այնտեղ ծուարած թևաւորների ձայները՝ լեռներում, ձորերում հովիները մնջեցին: Սինակայ սարերի հսկայ ստուերները ձգուելով հասան լճին, մի պահ երերացին թրթոռն ջրերի երեսին և ապա լուծուեցին երեկոյեան համատարած, միապաղադ մառախուղի մէջ լուսինը բարձրացաւ Մասը սի թիկունքից, արծաթազօծեց ծեր հսկայի ալեղարդկատարը, նրա ցոլքերը իջան ժայռերի վրայ, մուժ մառախուղը ցրեցին, աստղերը մէկիկ-մէկիկ վայլեցին ու թարթեցին իրանց աշիկները կապուտակ լճի մէջ. բայց նաւակն այնտեղ էր, գեռ օրօրւում էր ջրերի վրայ, գեռ առագաստը խաղում էր քամու հետ: Նաւօն հանգարտութեամբ շարունակում էր ջոկջոկել ձկները և առանձին-առանձին պարկերի մէջ տեղաւորել: Նա նոյն իսկ գլուխն էլ չէր բարձրացնում, հանդիսաւ էր, քանի որ նա սովոր էր նոյն իսկ շատ աւելի ուշ վերադառնալ տուն:

Եւ նրա խաղազութիւնն ու վատահութիւնը անհիմն չէին. նա գիտէր, որ երեկոյեան հովը միշտ փշում է Սինակայ լեռներից դէպի իրանց գիւղը, և փոքրիկ առագաստը բացած՝ նա մի կէս ժամում արագութեամբ կտրում էր ջրերի տարածութիւնը և տուն հասնում:

Լուսինն արդէն բաւական բարձրացել էր, երբ նաւօն իր գործն աւարտեց, ուռկանը հաւաքեց, նաւակի մէջ տեղաւորեց, այդ ժամանակ միայն վերև նայեց լուսինին և երկիւղից քար կտրեց: Լուսնի կարմիր բակը խիստ շարագուշակ էր. հովը սաստկանում էր, իսկ Սինակայ լեռների վրայ մի սկ ամպ էր խտացել, որ աճում էր համար աճում: Նաւօն փորձով գիտէր, որ այդ ամպը լաւ նշան չէ: Պէտք էր շտապել: Նաւօն տեսաւ անհանգստութեամբ, թէ ինչպէս նաւակն օրօրւում է աւելի ու աւելի սաստիկ, ինչպէս առագաստն ուռչում է, լայնանում, և ցցին կապուած պարանը ձգձգւում ու

ճարճատում։ Նա շտապով ջուալները նաւակի մէջ տեղաւորեց, առագաստը պնդացրեց, պարանն արձակեց, և ըստ երևոյթին յաջող հօղմը նրա նաւակը տաշեղի պէս մզեց գէպի գիւղ; լաւ էր։

Նաւօն արագութեամբ տարւում էր ուռած ալիքների վրայով և միւնոյն ժամանակ հայեացքը չէր հեռացնում Սինակայ սարերից։ Այն սև ամպը չը լայնանայ, հօղմն իր ուղղութիւնը չը փոխի, մտածում էր նաւօն, մնացածը հեշտ է։ Լուսնի բակն էլ չարագուշակ էր։ Բայց նաւակը սլանում էր կատաղի արագութեամբ, առագաստն ուռած էր, թիակներն էլ հարկաւոր չէին։ Ամենինչ մոռացած՝ նաւօն աչք չէր հեռացնում սև աթոյր ամպից։

Նա զգում էր, որ պէտք է շտապել։ Ահա նա լճակի կիսումն է, էլի մի փոքր այսպիսի քամի, և նա ափին կը հասնի։ Բայց սև ամպը լայնացաւ, լայնացաւ, վիշապի պէս հազար գլուխ շինեց և ձգուեց առաջ գէպի աստղերը, գէպի լուսինը։ Առագաստն այնպէս է ուռած, որ մօտ է տրաքուելու, պարանները ճարճատում են, կայմը ճռուում է ցաւով, և նաւակը լեռնացած ալիքների վրայ տարուբերւում է ահաւոր կերպով։ Նաւօն էլ ինչ անելլ չը գիտէ, նա կ'ուզէր գոնէ առագաստն իշեցնել, բայց դա այնքան էլ հեշտ չի, փոքրիկ անհաւասարութիւնը, որևէ պարանի մի փոքր ուշ արձակուելլ կարող է նաւակը թեքել ու խորասուզել։ Նաւօն կանգնել, բռնել է զեկը, շփոթուած նայում է, թէ ինչպէս ծռուում ու ճռճռում է փոքրիկ կայմը։

Ահա երկինքն արևմուտքում իսպառ ծածկուեց, բայց լուսինը գեռ փայլում է արևելքում, ափը հեռու չէ, և նաւօն ցաւով ու անհանգստութեամբ է նայում այն տարածութեանը, որ բաժանում է նրան ափից։ Ալիքները բարձրանում, դիզանում են, զարկուում են նաւակին, որ խաղում է անդունդների գլխին, մերթ ծովում, առագաստը քսում է ջրերին՝ ասես չափելով խորութիւնն իր գերեզմանի, մերթ կրկին բարձրանում, տըն-

քում ու ճռնչում Նաւօն մէկիկ-մէկիկ ջուրը թափեց ձկնով լի պարկերը, իր ամբողջ շաբաթուայ աշխատանքը, իզնւր, նաւակը չը փրկուեց և նա տնքում է ու ճօճում, կրանում է ու բարձրանում անդունդների վրայ։ Բայց մօտ է ափը, շատ մօտ, Նաւօն տեսնում է եզրը, տեսնում է գաշտերը, Նաւօն նշմարում է նոյն իսկ այն բարձր ցիցը, որից սովորաբար կապում է իր նաւակը։ Ելի մի փոքր, և նա կը համնի։ Բայց յանկարծքամին փոխեց իր ուղղութիւնը, նա փչում է հակառակ կողմից, ափը և գիւղն իր ճրագներով արագութեամբ փախչում են Նաւօնի աչքերից և շուտով կորչում խաւարի մէջ։ Նաւակին այժմ տարւում է գէպի լճակի հակառակ կողմը, գէպի այնտեղ, ուր գահավիժում է ջրվէժը, և այնպիսի արագութեամբ, որ Նաւօնի գլուխն է պտտում։ Նա գցեց վերջին պարկը, դանակը հանեց, պարանները կտրտեց, առագաստը վլաւ, իսկ ինքը թիակները ձեռք առաւ և թիավարում է գէպի գիւղը, գէպի մօտիկ ափը բոլոր ուժով։ Իզնւր, նաւակը տարւում է գլուխ շամեցնող արագութեամբ ուղիղ գէպի ջրվէժը, որ այժմ սարսափելի է. ալիքների թափից նրա ջրերը վար են զլորւում հսկայ յորձանքներով ու ահագին աղմուկով։ Մենակ է Նաւօն երկնքի և երկրի մէջ, կախուած անդունդների վրայ, օրօրւում է լեռնացած ալիքների վրայ, թրջուած, գոզալով, բայց գեռ կռւում է բնութեան գէմ, գեռ աշխատում է փրկուել։ Ասող չը կայ, քամին մռնչում է կատաղի թափով, իսկ խաւարը թանձրանում է հա թանձրանում։

Այժմ Նաւօն մօտ է հակառակ ափին, մօտ ջրվէժին։ Նաւօն նայում է սարսափած այն կողմը, ուր բացումէ ահաւոր ջրվէժի մահաբեր երախը, նայում է և դողում է ամբողջ մարմնով, ել ոյժ չունի մաքառելու տարերքի գէմ։ Թիակներից մէկը վազուց փշրուել է, իսկ միւսը վար է ընկնում թուլացած ձեռքից, նա այժմմը տածում է որպէս վերջին, գերագոյն փորձ, վերջին յուսահատ ճիգ ջրվէժին համնելուց առաջ նետուել ալիք-

ների մէջ և լողալով ափին հասնել, թողնելով՝ որ նաւակը խորասուզուի ջրվէժի առաջ՝ նա լաւ լողորդ է, այդ տարածութիւնը կարող է կտրել, յոյս ունի կտրել. նա արդէն աչքով չափում է ջրային ճանապարհը, նայում է այն կէտին, ուր ինքը հաւանականաբար ափ դուրս կը դայ:

Յանկարծ կայծակը ճայլթեց երկնքում ահռելի ուրատից յետոյ, փայլակը լուսաւորեց շրջակայքը մի վայրկեան, և նաւօն սարսափով նկատեց ափին մի ստուեր, մնարդ, թէ գե, այդ նա ասել չի կարող, բայց մի երկայն, կասկածելի ստուեր, որ նաւօն լաւ նշանաբարեց իր սրատես աչքերով: Եւ այն ստուերը հէնց այնտեղ է, ուր հաւանականաբար պէտք է դուրս գայ նաւօն, աւելի հեռուն ջրվէժն է: Նաւօն մտահոգ է, նա չը գիտէ ինչ անել, ինչպէս գուրս գալ այդ կասկածելի ստուերի մօտ, ով գիտէ, ինչ է այն, հրէշ, դե՞... թէ չէ այս սարսափելի քամիին մարդն այնտեղ ինչ դործ ունին նաւօն գիտէ, որ չար գիշերներին այրերից ինչոր սե բաներ են դուրս գալիս և վաղվզում լծի շուրջը, ծշում, ոռնում ու հրճում մրրկի հետ: Կայծակը նորէն ճայթեց, փայլակը կրկին լուսաւորեց, նաւօն կրկին տեսնում է սասկալի ստուերը, որ վաղվզում է ափերով, գընում է գէպի ջրվէժը, յետ է գալիս:

Նաւօն երկու կրակի մէջ է, մի կողմից ջրվէժն է մօտենում, իսկ միւս կողմում կասկածելի ստուերն է, և նա նայում է մերթ մէկին, մերթ միւսին, նայում է ու դողում: Նա պարզ լսում է ջրվէժի շառաչիւնը, լսումէ նրա ալիքների ձայնը, կրկին նայում է ափին, խաւար է, էլ ոչինչ չի նշանաբում: Փոթորիկը ոռնում է, ջրերը լեռնանում են, էլի մի քանի վայրկեան, և նաւօն իր նաւակով կը գահավիժուի ջրվէժի բարձրութիւնից, ուստի նա կանգնում է, երեսը խաչակնքում, նետում է ջրերի մէջ և լողում գէպի ափը:

Նա մերթ կօրչում է ալիքների տակ, մերթ յայտնրում է, թէերը ձգձգում, տարածում և լողում բոլոր

ուժով։ Եւ վերեռում որոտում են սև ամպերը, ճայթում  
է կայծակը հրեղին ակօներով, ալիքները լեռնանում  
ու փրփրում են՝ ասես կատաղած, որ իրանց գէմ այդ  
ահաւոր ժամին մաքառող մէկը կայ։ Մօտ է ափը, մօտ  
է փրկութիւնը, և նաւօն լարում է իր վերջին ոյժերը,  
փրփուրէ բրուները պատում է ու լոզում առաջ։  
Յանկարծ նտ զգում է ջրերի մէջ մի մութ, սև զան-  
գուած, որ մերթ զարկում է իրան, մերթ ալիքների  
թափով հեռանում։ Նաւօն սոսկում է, սև զանգուածը  
մարդկային մարմին է, նրան թւում է նոյն իսկ, որ  
նա կենդանի է, որ փորձում է բռնել իրան, գուցէ  
անդունդները վար քաշելու համար։ Յետին ճիգերն է  
հաւաքում նաւօն և ձգւում է առաջ այդ սարսափելի  
արարածից աղատուելու համար և նոյն վայրկենին  
զգում է, թէ ինչպէս մի ձեռք կախուեց իր ոտքից։ Նա-  
ւօն սոսկումով բռնուած՝ ոտքի մի ուժգին հարուածով  
յետ է մզում այդ ձեռքը, փորձում է կրկին լող տալ, և  
նոյն ձեռքը այս անգամ մի յուսահատ ճիգով գրկում  
է նրան, այս անգամ սկսում է մի չը տեսնուած պայ-  
քար այս խորհրդաւոր մարմնի և նաւօի մէջ, վերջինս  
աշխատում է աղատուել նրանից, ցնցւում, գալարւում  
է, միւսը կախում է նրանից բոլոր ուժով, և խեղ-  
գոտում, քաշքշում են իրար այս երկու մարմինները  
փրփրած ալիքների մէջ, մինչդեռ կայծակները վերից  
ճայթում են նրանց գլխին, ամպերը որոտում խացու-  
ցիչ թափով։ Զօրի չար ոգի՞ է, թէ մի հրէշ, նաւօն այդ  
չը գիտէ, բայց զգում է, որ խորհրդաւոր մարմինը աշ-  
խատում է նրան քաշել իր հետ դէպի անդունդները,  
բայց նաւօն հմտաւ է և ուժեղ, նա ուզում է ապրել,  
ափն էլ մօտ է. նա յոյս ունի փրկուել ուստի մի վեր-  
ջին անգամ աղատում է այդ սարսափելի էակից, ոտի  
մի ուժեղ հարուածով միզում է նրան դէպի անդունդ-  
ները և ինքը ալիքների թափով նետում դէպի ափը և  
դետին ընկնում ուշաթափ։  
Նոյն վայրկենին նրա վրայ կռանում է մի մարդ-

կային ստուեր, գրկում, բարձրացնում է, մումում է  
ինքն իրան, ի վերջոյ շալակում է կիսամեռ նաւօին, և  
խաւարի մէջ քայլում է՝ որչափ կարելի է արագ։ Կայ-  
ծակները շարունակում են ճայթել երկնքում, ամպերը  
որոտում են անընդհատ, անձրել քամու ուժեղ թափով  
շփում է շեշտակի, բայց մարդը քայլում է հայ քայլում  
խաւարի մէջ։

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

(ՊԼ շարունակուի)